«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» առարկայի
9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

2017-2018 ուստարվա ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում «Աշխարհագրություն» առարկայի ուսումնական ծրագիրը և դպրոցական դասագրքերը:

1. ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄՈՏԱՎՈՐ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/h	ԲԱԺԻՆ	Համամասնություն (%-ով)
1	Ընդհանուր տեղեկություններ Երկիր մոլորակի մասին	3
2	Աշխարհագրական թաղանթը և նրա ոլորտային կառուցվածքը	17
3	Մայրցամաքներ և օվկիանոսներ	14
4	Հասարակական աշխարհագրություն	14
5	Տարածաշրջաններ և երկրներ	26
6	Հայաստանի աշխարհագրություն	26
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		100

2. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ավարտական քննական թեստը բաղկացած է 32 առաջադրանքից:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ են 1-22-րդը: Այս առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4 տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Դրանց պատասխանելիս ընտրած պատասխանի համարը թեստում պետք է վերցնել շրջանակի մեջ, որից հետո «X» նշանով նշել պատասխանների ձևաթղթում:

Օրինակ՝ առաջադրանք **7. Նշված երկրներից ո՞րն է գտնվում Եվրոպայում:**

1) Չինաստանը
2) Բրազիլիան
3) Ֆրանսիան
4) Ալժիրը

Օրինակ՝ առաջադրանք **8. Ո՞ր շարքում է տրված մարզերի և մարզկենտրոնների ճիշտ համապատասխանությունը:**

1. Արագածոտն ա. Արտաշատ
2. Լոռի բ. Իջևան
3. Տավուշ գ. Աշտարակ
4. Արարատ դ. Վանաձոր

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4) 1- դ, 2-ա, 3-բ, 3-գ

Կարճ պատասխանով առաջադրանքներ են 23-30-րդը:

Այս առաջադրանքների բաց թողած տեղում, գծի վրա, պետք է գրել պատասխանը, որը կարող է լինել բառ, բառակապակցություն կամ թիվ: Պատասխանն անհրաժեշտ է անցկացնել պատասխանների ձևաթղթի մեջ:

Օրինակ՝ առաջադրանք **24. Ինչպե՞ս է կոչվում երկրի խորքից դուրս ժայթքած, ջրային գոլորշիներն ու գազերը կորցրած մագմա:**

Պատասխան՝ <u>_լավա:</u>

Այս տիպի առաջադրանքների պատասխանները ևս պետք է անցկացնել պատասխանների ձևաթղթի մեջ:

31-րդ առաջադրանքը պնդումների փունջ է:

Պնդումների փնջում տրվում է որևէ թեմայի վերաբերյալ 4 պնդում, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է տալ երեք տիպի պատասխան՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ»:

Օրինակ՝ առաջադրանք **31.Աշխարհի բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ կամ *սխալ*:**

1) Զարգացած երկրների մեծ մասում բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ:
2) Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրներին բնորոշ են ծնելիության և բնական աճի միջինից բարձր ցուցանիշները:
3) Աշխարհի առավել խիտ բնակեցված տարածաշրջաններից են Հյուսիսային Եվրոպան և Հարավարևմտյան Ասիան:
4) Աշխարհի բնակչության խտությունը ծովերից կամ օվկիանոսներից հեռանալուն զուգընթաց աճում է:

Ձևաթղթի լրացման կարգը: Պատասխանների ձևաթղթում պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման համարի ներքևում տրված է երեք վանդակ: Տրված պնդման պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ՝ 31-րդ առաջադրանքը պնդումների փունջ է և յուրաքանչյուր պնդման համար ընտրված պատասխանը լրացվում է հետևյալ ձևով՝

31	1	2	3	4
Ճիշտ է		X		
Սխալ է	X		X	X
Չգիտեմ				

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանք է 32-րդը:

32-րդ առաջադրանքի հիմնավորումները մանրամասնորեն պետք է գրել առաջադրանքից հետո բաց թողած տեղում:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 4 հնարավորություն, որից 2-ը ընտրովի, 1-ը կարճ պատասխանով, 1-ը պնդումների փունջ առաջադրանքի համար:

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրովի, կարճ և ընդարձակ պատասխաններով առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:

Պնդումների փնջին տրվում է առավելագույնը 4 միավոր:

Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար տրվում է մեկ միավոր: Յուրաքանչյուր սխալ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է մեկ միավոր:

«Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում և չի հանվում: Եթե առաջադրանքի 4 պնդումներից ստացված միավորների գումարը դրական է, այն համարվում է այդ առաջադրանքի գնահատականը: Եթե տրվող և հանվող միավորների քանակը հավասար է կամ հանվող միավորների թիվը գերազանցում է տրվող միավորների թվին, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:

4. ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

1. **ընտրովի պատասխանով** առաջադրանքներ՝ 22 միավոր,
2. **կարճ պատասխանով** առաջադրանքներ՝ 8 միավոր,
3. **պնդումների փունջ** առաջադրանք՝ առավելագույնը 4 միավոր
4. **ընդարձակ պատասխանով** առաջադրանք՝ 1 միավոր:

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ Քննության

տևողությունը 120 րոպե է:

Թեստ-գրքույկի դատարկ մասերը օգտագործվում են սևագրության համար:

2018 թ. 9-րդ դասարանի ավարտական քննություն

Պատասխանների ձևաթուղթ

Աշխարհագրություն

Եղե՛ք ուշադիր Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելու համար ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրեք X նշանը (միևնույն սյունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի համարը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	1
2	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	2
3	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	3
4	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	4

Պատասխանի համարը	21	22
1	☐	☐
2	☐	☐
3	☐	☐
4	☐	☐

Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը ☐☐

1	☐
2	☐
3	☐
4	☐

1	☐
2	☐
3	☐
4	☐

Կարճ պատասխանով առաջադրանքներ

Առաջադրանքի համարը

23		27	
24		28	
25		29	
26		30	

Սխալ նշված պատասխանը փոխելու տեղը ☐☐ ☐

Պնդումների փունջ

31

	1	2	3	4
Ճիշտ է	☐	☐	☐	☐
Սխալ է	☐	☐	☐	☐
Չգիտեմ	☐	☐	☐	☐

Սխալ նշված պատասխանը փոխելու տեղը

Պնդ. փունջ

31 ☐

Ճիշտ է ☐

Սխալ է ☐

Չգիտեմ ☐

☐

Փոխված պատասխանների քանակը

Լրացնում է ստուգողը

Ընդարձակ պատասխանով առաջադրանքի միավորը

32

1 ☐

Հանձնաժողովի անդամներ՝

1. .....

2. .....

Հանձնաժողովի նախագահ՝

.....

Միավորների գումարը	
Գնահատականը	